

**Հարցաթերթ**  
**Աշխարհագրություն առարկայի 2019 թ. դպրոցական օլիմպիադայի**  
**մարզային (քաղաքային) փուլի**  
**(տևողությունը – 150 րոպե)**

**11-12-րդ դասարաններ**

1. Հասարակական աշխարհագրությունը բաժանվում է ճյուղային և համալիրային գիտությունների: Թվարկել ճյուղային գիտություններից ցանկացած չորսը.....1 միավոր
2. Գրել նշված լեռնաշղթաների (լեռնաշխարհների) բարձր գագաթները և դրանք դասավորել հյուսիսից հարավ ճիշտ հերթականությամբ..... 2 միավոր  
Պոնտոսի, Ուրալյան, Եթովպական, Էլբուրսի
3. ՀՀ գյուղատնտեսության վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.....1,5 միավոր
  1. Գյուղատնտեսական հողահանդակներից ամենամեծ մակերեսը զբաղեցնում են վարելահողերը:
  2. Հողաբարելավման գլխավոր եղանակը քիմիական մեխորացիան է:
  3. Կարտոֆիլ մշակվում է համարյա բոլոր բնական գոտիների ցանքատարածություններում:
  4. Անասնապահության արտադրանքի բաժինը գերակշռում է բուսաբուծության նկատմամբ:
  5. Հացահատիկի և կարտոֆիլի մշակությունն ունեն տեղական նշանակություն:
  6. Բուսաբուծության մասնագիտացված ճյուղերից են խաղողագործությունը և պտղաբուծությունը:
4. Գտնել օրինաչափությունը, ուղղել սխալ շարքերը և կազմել ճիշտ եռյակները..... 2 միավոր

արկտիկական անապատ	- ուղտափուշ, օշինդր	- գորշահող, դարչնագույն հող
տունդրա	- փետրախոտ, շյուղախոտ	- պողոզային հող
տայգա	- կաղնի, հաճարենի	- կմախքային (սաղմնային) հող
լայնատերև անտառ	- բառբաբ, շշածառ	- կարմրագորշ հող
տափաստան	- սոճի, եղևնի	- կարմրադեղին (լատերիտային) հող
անապատ	- մամուռ, քարաքոս	- տորֆաճահճային հող
սավանա	- ֆիկուս, արմավենի	- սևահող
հասարակածային անտառ	- բոշխ, թփուտ	- գորշ անտառային հող
5. Որքա՞ն էլեկտրական էներգիա (կվտ / Ժ) կարելի է ստանալ 8 տոննա նավթից, եթե նրա ջերմային գործակիցը 1,3 է..... 1 միավոր
6. Երկրի բնակչության թիվը 90 000 է, իսկ բնական աճի գործակիցը՝ 15 ‰ :  
Տարվա ընթացքում ներգաղթը կազմել է 1800, իսկ արտագաղթը՝ 700 մարդ:.....2 միավոր
  - ա) որոշել բնակչության բացարձակ աճը
  - բ) որոշել բնակչության թիվը մեկ տարի հետո

7. Լրացնել բաց թողնված բառերը.....1 միավոր  
 Իսպանիան պետական կառուցվածքով ..... պետություն է: Նրա  
 հյուսիսային ափերը ողողում են ..... ծոցի, իսկ արևելյան ափերը՝  
 Միջերկրական ծովի ջրերը: Երկրի արևելյան ափերին գտնվում է  
 ..... կղզեխումբը: Մադրիդի միջով հոսում է..... գետը:
8. Աշխարհագրական թաղանթի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք  
 են ճիշտ, որո՞նք՝ սխալ.....1,5 միավոր
1. Աշխարհագրական թաղանթը սահմաններով և ծավալով ավելի փոքր է,  
 քան կենսոլորտը:
  2. Աշխարհագրական թաղանթը հանդիսանում է Երկրի ամենախոշոր  
 բնատարածքային համալիրը, որը բաժանվում է ավելի փոքր բնական համալիրների:
  3. Նրա մեջ մտնում են քարոլորտի վերին, մթնոլորտի ստորին շերտերը,  
 ջրոլորտը, կենսոլորտը և մարդոլորտն ամբողջությամբ:
  4. Նրա կազմի մեջ մտնող ոլորտները և բաղադրամասերը սերտ կապերի  
 ու փոխազդեցության մեջ են:
  5. Աշխարհագրական թաղանթի կարևոր հատկանիշներից է կլիմայի խիստ  
 ցամաքայնությունը:
  6. Աշխարհագրական թաղանթի հզորությունը կազմում է մոտ 100-150 կմ:
9. Հաշվել Ստամբուլ և Երևան քաղաքների մթնոլորտային ճնշումների  
 և օդի ջերմաստիճանների տարբերությունները , եթե նույն պահին  
 Երևանում մթնոլորտային ճնշումը 660 մմ է.....2 միավոր
10. Նշված պետությունները գրել բնակչության թվի աճման հաջորդականությամբ.....2 միավոր  
 Ավստրալիա, Գերմանիա, Իտալիա, Ֆրանսիա, Ճապոնիա, Իրան,  
 Ուկրաինա, Բրազիլիա
11. Լեռան ստորոտին օդի ջերմաստիճանը 24 ° C է: Լեռան գագաթին  
 մթնոլորտային ճնշումը 420 մմ է, իսկ ստորոտին՝ 720 մմ:.....2 միավոր  
 ա) որոշել լեռան հարաբերական բարձրությունը  
 բ) որոշել օդի ջերմաստիճանը լեռան գագաթին (հաշվարկը կատարել 6 ° C-ով)
12. Հարավարևելյան Ասիայի երկրների ընկերակցության (ԱՄԵԱՆ) մեջ մտնում է 10  
 երկիր, որոնցից են Սինգապուրը, Մյանման: Թվարկել մնացած 8 պետությունները.....2 միավոր